Հոկտեմբերի 29-ին ի Տէր հանգաւ Մկրտիչ Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսը և նոյեմբերի 6-ին մեծ հանդիսաւորութեամբ ամփոփուեց Էջմիածնում Ներսէս V կաթուղիկոսի կողքին։

Վեհափառի մահուամբ Հայոց Ազգագրական ընկերութիւնը բացի ընդհանուր, համայն ազգի սիրելի ՀԱՅՐԻԿԻՑ զրկուելուց, զրկուեց նաև իւր բարձր Հովանաւորողից, Նրանից, որ դեռ յիսնական թուականներին ինքը հաւաքում էր ազգագրական նիւթեր և որ ունեցաւ Գարեգին Սրուանձտեանի ոչէս ազգակիր աշակերտ։

Չնայած միջոցների սաստիկ սղութեան և տաօրեայ կարիքների բազմութեան՝ Վեհափառը հիմնեց Էջմիածնում թանգարան, և սա ամենագեղեցիկ յուշարձանը կարող է լինել Նրա յաւերժական յիշատակին, եթէ Հայերս կուլտուրապէս այնքան նախապատրաստուած լինենք, որ կարողանանք պահպանել և հարստացնել։

Տ. Կ.

ՄԿՐՏԻՉ ԾՈՒՐԸՆ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՈՆՀՈՒՆԵԼԻ ԿԱՄՈՔՆ

Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք հանրազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ **ԷՋՄԻԱԾՆԻ** Պատուարժան անդամոց խորհրդոյ Ազգագրական ընկերութեան Հայոց որ ի Տփխիս, Ազնուափայլ Տիկնանց Հայկանուշի Մարտիրոսեանց, Նատալիոյ Նունուճարեանց եւ Մեծապատիւ պարոնայց Ադէքսանդրի Մելիք Ազարեանց, Առաքելի Սարուխանեանց, Մնացականայ Խունունց, Քրիստափորի Տէր-Սարգսեանց, Յովսէփայ Տէր-Դաւթեանց, Եփրեմայ Ծատուրեանց եւ Երուանդայ Լալայեանց, դստերաց եւ որդւոց հարազատաց *Մայր Աթոռոյս*, ողջոյն, սէր եւ *Հայրապետական* Օրհնութիւն:

Յայտ լիցի, ո՛րդեակք իմ, զի ակն արկեալ *ՄԵՐ* ի կանոնադրութիւն նորակազմ ընկերութեանդ՝ բերկրութիւն ելից զսիրտս *ՄԵՐ*:

Ապահէն աւելորդ իսկ է յիշատակել ասդէն զկարեւորութիւն ձեռնարկութեանդ, զի յայտնի է ամենեցուն եթէ յորպիսում խաւարի անյայտութեան ծածկի յաչաց ողջոյն անցեալն ազգիս, զորոյ զդարեւոր քաղաքակրթութենէն առաւել անգիտանամք այսօր քան զիտիցիմք ինչ, զի որ ինչ գուցեն իմաստենագրութիւնս երանելի նախնեաց մերոց ընծայեալս ցարդ ի լոյս, ինքնին՝ կարի սակաւք՝ չեն բա-

ական լրացուցանել գպատմութիւն անցից եւ պատահարաց բարուց եւ սովորութեանց, ընտիր եւ եթէ յոռի յատկութեանց եւ ունակութեանց ցեղականաց, յորոյ միայն ի ձեռն մարթ է իմեր հասնել զպատկեր ողջոյն քաղաքակրթութեան ազգին եւ աշխարհիս Հայաստանեայց ի սկզբանէ մինչեւ ցայսօր. մինչ յէջս հինաւուրց մատենից ձեռագրաց, ի բերան կենդանի ժողովրդեան, որպէս եւ ի ներքոյ եւ յերեսս աւերակաց ո՛ղիսի բազմութիւն դեռ եւս գրաւոր եւ անգիր յիշատակարանաց, պատմուածոց եւ աւանդութեանց, քանդակաց եւ իրաց, յորոց ի միջոյ աչք հետախոյզ գիտնականին միայն ի վեր հանցեն որ ինչ անծանօթն իցէ դեռ եւ սփռիցեն զլոյս ընդ ամենայն իրս ժամանակաց անցելոց. առ որ տարուբերիցին միտք յետնոյս յանստոյգ ենթադրութիւնս։

Որդեակք իմ, կազմածք նորոյ Ընկերութեանդ, անդամք որոյ չեն անծանօթք յազգիս ՄԵՐՈՒՄ, ոմանք ուսումնական երկասիրութեամբք իւրեանց, այլք հասանութեամբ մտաց, փորձառութեամբ 'ի հանրային գործս եւ պատկառանօք պատոյն՝ յոր վայելեն ի հրապարակի, են ապահէն երաշխիք հաւատեաց, եթէ նպատակն որ առաջադրեալ է ի կանոնադրութեան անդ, այսինքն են՝ ազգագրական եւ մարդաբանական մանրազնին ուսումնասիրութիւնք երկրիս Կովկասու, եւ ամին սահմանակից աշխարհաց, պսակել պսակեսցէ յաջողութեամբ զջանս եւ գձեռներէցութիւնդ եւ զՄԵՐ լցցէ զիղձն եւ արդարացուսցէ զհաւատս։ Սակս որոյ շնորհ կալցին վաստակոց ձերոց ոչ միայն դպրութիւն Մերոյս Հայկազնեայն ազգի այլ եւ որոց միանգամ բնակեալն իցեն եւ բնակիցին ի Կովկաս ազգաց ազգաց դպրութիւնք եւ ուրուանդք։ Ի ձեռն համեստ գիտնոց վաստակողացդ լուսաւորեսցի պատմութիւն առ հասարակ եւ զայսուղ քրտանց ձերոց նա՛ օրհնեսցէ։

Եւ արդ՝ ՄԵՔ եւս որ սիրողս եմք գիտութեան եւ ջանադիր պահպանութեան հայրենի յիշատակարանաց եւ ըստ

կարի **ՄԵՐՈՒՄ** սատար եւ խրախուսող ա՛յնոցիկ որ զայն կրեն ոգի եւ իսմին տճնիցին, զոնութեամբ սրտի **ՕՐՀՆԵՄՔ** հայրաբար գնեւնարկութիւնդ զայդ մեծ եւ կարեւոր եւ գնովանին **ՄԵՐ ԶՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ**, զոր հայցէ ըստ որոշման ընդհանուր ժողովոյ Ընկերութեանդ գումարելոյ ի 11 յունիսի հերուան, տարածանեմք ի վերայ ուսումնասէր Ընկերութեանդ, որ որ ըստ որէ բարգաւանեալ ծաղկեսցի ձեզ ի փառս եւ **ՄԵԶ** ի խինդ. ամէն.

ՄԿՐՏԻՉ ԿԱԹ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ի 9 Մայիսի 1907 ամի.
Եւ ըստ տոմարիս ՌՅԾԶ
Ի Հայրապետութեան Մեր ԺԴ ամի. Ի Տփխիս
թ. 851.